



ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Հայաստանի Կառավարութիւնը կ'ողջունէ Եւրոպական Միութեան 15 Յուլիս 2019-ի պաշտօնական դիրքորոշումը թիրաքիոյ նկատմամբ՝ գրաւեալ հիւսիսային Կիպրոսի ափամերձ ջուրերուն մէջ անոր ձեռնարկած հորատման անօրէն աշխատանքներուն պատճառով:

Միեւնոյն ժամանակ, Արեւմտեան Հայաստանի Կառավարութիւնը ընդհանուր առմամբ, պատժամիջոցներու քաղաքականութիւնը կը նկատէ որպէս միջազգային օրէնքի խախտման մէկ այլ տեսակ: Հետեւաբար, ողջմիտ եւ կառուցողական մօտեցում մը չէ՝ թիրաքիոյ կողմէ միջազգային օրէնքի եւ իրաւունքներու խախտումին դիմաց հանդէս գալ մէկ այլ խախտումով:

Եթէ քաղաքակիրթ աշխարհը իսկապէս կը դատապարտէ թիրաքիոյ շարունակական անհնազանդութիւնն ու խախտումները միջազգային օրէնքին եւ իրաւունքներուն նկատմամբ, որոնք տեղի կ'ունենան ոչ միայն այսօր, այլ 1918-էն ի վեր, ապա ժամն է որ վերատեսութեան ենթարկուին նոյն ներկայ արհեստական թիրաքիոյ գոյութեան հիմքերը, որոնք նոյնպէս բացայայտ խախտումներ էին թէ միջազգային շարք մը օրէնքներու եւ իրաւունքներու եւ թէ մարդկանց իրաւունքներու եւ արդարութեան սկզբունքներուն:

Ախտը կը բուժուի իր բուն պատճառները վերացնելով, եւ ոչ թէ հետեւանքները դատապարտելով:

Արեւմտեան Հայաստանի Կառավարութեան Վարչապետի լրատուական գրաստնեակ

16 Յուլիս 2019